

Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՃԱՌ  
ՀԱՄ Կ(Բ) Կ XVIII  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

355(47)  
4-90

Պ Ե Տ Հ Բ Ա Տ

ԻՍԿԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

U.S.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ




1 MAR 2010

355(47)

Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

4-90

ս/



ՃԱՌ  
 ՀԱՄ Կ(Բ)Կ XVIII  
 ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 Թ. ՄԱՐՏԻ 13-ԻՆ

333  
76

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
 ԳՄՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
 ՅԵՐԵՎԱՆ • 1939

12 AUG 2013

40. 893



2558  
39

К. Е. ВОРОШИЛОВ  
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ  
ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

Ընկերներ: Ընկեր Ստալինի ղեկուցումը, վոր մարքս-լենինյան թեորիական դանձարանը հարստացնում և նոր, վիթխարի արժեք ունեցող ներդրումով, հիանալի ուղեցույց և հանդիսանում կուսակցության, մեր պետության ու ժողովրդի համար՝ սոցիալիզմի կառուցման հետագա պայքարի գործում, կոմունիստական հասարակության կառուցման պայքարի գործում: Ժամանակակից կապիտալիստական հասարակության և հաղթական սոցիալիզմի յերկրի հեռուրա փոխհարաբերությունների մարքս-լենինյան փայլուն անալիզով ընկեր Ստալինը բացահայտեց ժամանակակից կապիտալիզմի բոլոր խոցերը, ներխուժքն ու հողեարքը և պարզ կերպով ցույց տվեց սոցիալիստական Սորհրդային Միության հուժկու ծաղկումը:

Համաշխարհային բուրժուազիան անլուծելի հակասությունների փակուղուց յելքե վորոնում դազադած Փաշիզմի մեջ, արամադրելով նրան գործողությունների լիակատար ազատություն: Նա նրան խրախուսում և ուզմական ավանտյուրանների, պայքարի յե գրգում Սորհրդային Միության դեմ: Տեր ու տնորինություն անող իմպերիալիստական բուրժուազիայի այդ, թող թույլ տրվի ասել, «միջազգային քաղաքականությունը» վոչ միայն ամբողջ պետություններ հանձնեց Փաշիզմի իշխանությունը, այլև թույլ տվեց, ոգնեց նրան սկսելու յերկրորդ իմպերիալիստական պատերազմը, վորի գոհն են դարձել արդեն մի շարք խաղաղասեր յերկրների կես միլիարդ մարդիկ:

Իր ղեկուցման մեջ ընկեր Ստալինն ասաց, վոր «...աշխարհի հեռավոր անկյունում վորեն մի տեղ ազրեստրների սկսած ամեն մի նույնիսկ վոչ-մեծ պատերազմ վտանդ և ներկայացնում խաղաղասեր յերկրների համար: Առավել ևս լուրջ վտանդ և ներկայացնում նոր իմպերիալիստական պատերազմը, վորն արդեն կարողացել և իր որբիտի մեջ քա-

չել Ասիայի, Աֆրիկայի, Յեվրոպայի ավելի քան 4ինգհա-  
րյուր միլիոն բնակչութուն»:

Հաղթանակած սոցիալիզմի յերկիրն ամենախաղաղա-  
սերն և աշխարհի բոլոր յերկրներէց: Բայց շրջապատված  
լինելով թշնամական իմպերիալիստական յերկրներով, հան-  
դիսանալով իր դարն ապրող կապիտալիզմի աչքի փուշը,  
նա, ավելի քան վորեւե այլ յերկիր, դռնվում և ռազմական  
հարձակման մշտական սպառնալիքի տակ:

Սաղաղասեր պետութիւնները, վորոնց մեջ կան նաև  
մեր մերձավոր հարևանները, քիչ բան են անում խաղա-  
ղութիւնն ամրապնդելու և ազրեստրները դեմ հակահար-  
ված նախապատրաստելու համար: Ուստի մենք պետք է,  
ինչպես և առաջ, հուշս դնենք միայն մեզ վրա:

Սաղաղութիւնը, վորի բարիքներէց Սորբոլային Մի-  
ութիւն ժողովուրդներն ողտվում են ավելի քան մեկ ու կես  
տասնյակ տարվա ընթացքում, հանդիսանում է մեր կու-  
սակցութիւն, Կառավարութիւն և ամբողջ ժողովուրդի վեր-  
խարի աշխատանքի արդյունքը: Սաղաղութիւնը մեր պե-  
տութիւն: Համար մենք ենք անում մեր սեփական ձեռքով:

Մեր սոցիալիստական եկոնոմիկայի հուսկու աճման  
հիման վրա, ստալինյան յերկու հնդամյակների փայլուն  
կատարման և յերկրում սոցիալիստական կուլտուրայի ան-  
նախընթաց ծաղկման հետևանքով, կուսակցութիւն Կենտ-  
րոնական Կոմիտեն և Կառավարութիւնը, մեր Ստալինի  
անմիջական ղեկավարութեամբ, անդու կերպով ամրապնդել  
և կատարելադործել են մեր զինված ուժերը՝ Բանվորա-  
Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմ-Մովային Կար-  
միր Նավատորմը, վորոնք վորպես ահեղ ուժ կանգնել են  
ու կանգնած են մեր Հայրենիքի սահմանների վրա, ապա-  
հովելով նրան թշնամու արշավանքից:

Յես ուզում եմ մի փոքր մանրամասն, իհարկե, թույ-  
լատրելի շրջանակներում, կուսակցութիւն XVIII համազու-  
մարին ղեկուցել այսօրվա Կարմիր Բանակի մասին:

Բայց նախքան դրան անցնելը, յես ուզում եմ կարճ  
ժամանակով ձեր ուշադրութիւնը զբաղեցնել իմպերիալիս-

տական, մտնավանդ Փաշիստական, պետութիւնների սպա-  
ռազինումների անընդհատ աճման հարցերի վրա: Յես դի-  
տեմ, վոր դա հանրահայտ է, բոլորովին ձանձրացրել է,  
այնուամենայնիվ դրա մասին անհրաժեշտ է խոսել:

«Правда»-յի մարտի 5-ի համարում դերմանական Փա-  
շիստական ռազմական «Դոյչե Վեր» ժուռնալից մի արտա-  
սպառութիւն և կատարված, վորի մեջ ցույց են տրված  
ամենազլխալոր յերկրների խաղաղ ժամանակվա բանակնե-  
րը և պատերազմի համար այդ բանակների ծավալման չա-  
փերը, ինչպես նաև տրված են վորոշ տեղեկութիւններ  
նրանց հրետանային ու ավիացիոն սպառազինման մասին:

Այդ հոդվածում զգուշորեն լռում են դերմանական  
զինված ուժերի մասին: Վոչինչ չի ասված այն մասին, վոր  
Փաշիստական Գերմանիայի խաղաղ ժամանակվա բանակը  
կազմված է 1.150.000 մարդուց, վոր Փաշիստական ռազմա-  
փանաջված կազմակերպութիւններն ունեն մինչև 2 մի-  
լիոն մարդ և վոր պատերազմի ժամանակ Գերմանիան իր  
բանակը կընդարձակի 5,5—6 անգամ:

Նրանք իրենց մասին վոչինչ չեն ասել, բայց ուրիշների  
մասին ասվածն արժանի յե ուշադրութիւն:

Բանակների թվական կազմը խաղաղ ժամանակ և յեն-  
թաղբվող թվական կազմը պատերազմի ժամանակ հետևյալ  
պատկերն է ներկայացնում.

Յերկրները	Խոստանակ		Պարզա- կան ճիւղերի մասին
	Բանակի թվական կազմը	Խաղաղ ժամանակ	
ԱՄՆ . . . . .	384.000	2.500.000	6,5
Անգլիա . . . . .	529.200	2.000.000	3,6
Ֆրանսիա . . . . .	760.000	5.100.000	6,7
Իտալիա . . . . .	400.000	2.000.000	5,0
Յապոնիա . . . . .	328.000	1.500.000	4,6
Թյուրքիա . . . . .	203.000	1.300.000	6,4
Ռումինիա . . . . .	217.000	1.600.000	7,4
Կենսաստան . . . . .	302.000	3.600.000	11,9
Լատվիա . . . . .	25.500	150.000	5,9
Նաորիա . . . . .	11.000	100.000	9,0
Յինլանդիա . . . . .	28.000	310.000	11,1

Իտալական և յապոնական բանակներէ վերաբերմամբ մատնանշված թվական կազմը կարիք ունի շատ լուրջ ուղղումներէ, այն այստեղ նվազեցված է:

Յապոնական բանակը, որինակ, արդեն այժմ զենքի տակ ունի մեկ ու կէս միլիոնից ավելի մարդ և նրա աճումը շարունակվում է. ինչ վերաբերում է Իտալիային, ապա իտալական Ֆաշիզմի առաջնորդները խոստանում են իրենց բանակն ընդարձակել մինչև 9—10 միլիոն մարդ:

Թվարկված բոլոր մնացած բանակների վերաբերմամբ, բացառյալ Կարմիր Բանակը, վորի վերաբերյալ տվյալները Ֆաշիստական «Իոյչե Վեր»-ն անաստված կերպով խճճում է, ապա լիակատար հավաստիութուն չտալով այդ թվերին, հարկավոր է ասել, վոր դրանք ճշմարտութունից այնքան ել հեռու չեն, և համենայն դեպս միանգամայն բավական են վորոչ հետեութուններ անելու համար:

Իսկ հետեութունները բղխում են ինքնին:

Ամենից առաջ աչքի յե դարնում պատերազմի Ժամանակվա բանակներէ մորելիցացիոն ընդարձակման մեծ կոեֆիցիենտը: Յեթե բացառենք Անգլիան, վորն իր բանակն ընդարձակում է միայն 4 անգամ, ապա մնացած բոլոր բանակները պատերազմի դեպքում ավելանում են հինգ, մյուսները՝ վեց, յոթից ավելի ու ինն անգամ, իսկ Լեհաստանն ու Ֆինլանդիան նույնիսկ համարյա 12 անգամ:

Այդ վկայում է հիշյալ բոլոր յերկրների կատաստրոֆիկ լարվածության մասին նրանց՝ պատերազմի մեջ մտնելու հենց սկզբում:

Մինչդեռ բոլոր պատերազմների փորձով ապացուցված է, վոր վոչմի գործող բանակ չի կարող պահպանվել սկզբբնական կազմութունների ու թվական լիմիտների շրջանակներում և արդեն ամենակարճ Ժամանակից հետո ստիպված է աճել ու փքվել:

Այդ հատկապես անվիճելի յե ձգձգվող պատերազմներում: Իսկ Ժամանակակից պատերազմները, ինչպես այդ մասին պերճախոս կերպով վկայում է յերկրորդ իմպերիա-

լիստական պատերազմը, կլինեն յերկարատև, ձգձգվող, ավերիչ:

Նույն այդ լարվածության մասին են խոսում նաև կապիտալիստական ամենադիտավոր ու, առաջին հերթին, Ֆաշիստական յերկրների ռազմական բյուջեները:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Յերկրները	Ռազմական բյուջեյի առկուսային հարաբերությունը՝ ընդհանուրին.	
	1934—35 թ. թ.	1937—38 թ. թ.
Գերմանիա . . . . .	21,0	67,0
Յապոնիա . . . . .	43,4	70,0
Իտալիա . . . . .	20,0	52,0
Լեհաստան . . . . .	32,9	33,6
Անգլիա . . . . .	15,5	32,2
ԱՄՆ . . . . .	14,2	17,7
Յրանսիա . . . . .	24,4	37,7

Այստեղ խոսքը վերաբերում է միայն պաշտոնապես հրապարակվող ռազմական բյուջեներին: Բայց հարկավոր է հատկապես խորաթափանց լինել՝ կուսակու համար, վոր Ֆաշիստական պետութունները, վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ադրեսսիվ պատերազմ են մղում, բացի դրանից ունեն ռազմական ծախսերը ծածկելու նաև այլ աղբյուրներ, վորոնց մասին հասարակական կարծիքը վոչինչ չգիտե:

Կապիտալիստական յերկրների ավիացիոն սպառազինումների կատաղի մրցավազքը շարունակվում է արդեն մի շարք տարիներ և, անկասկած, իրենից ներկայացնում է ռազմական ընդհանուր անխուսափելի ընդհարման առավել բնորոշ ու վորոշիչ մոմենտներից մեկը:

Ի՞նչ էր ներկայացնում իրենից համաշխարհային հիմնական պետութունների ավիացիան առաջին իմպերիալիստական պատերազմի վերջում և ի՞նչ է նա հանդիսանում ներկայումս:

Մի կողմ թողնելով ավիացիայի տեսակները և նրա վորակի մանրագնին ըննության հարցերը և վերցնելով միայն ընդհանուր գումարային տվյալները, վորոնք տարբեր ժամանակ հրատարակված են յեղել համաշխարհային մամուլում, ստացվում և հետևյալ պատկերը.

Համեմատական տվյալներ րտարերկրյա պետությունների ոդային նավատորմի րվական կազմի, նրանց ուրային համագործի և մեկ բոլոյում արձակվող գնդակների քանակի վերաբերյալ:  
1918—1934—1938 թ. ր.

Տարիներ	Ինքնաթիռների քանակը	Աճման տոկոսը 1918 թ. համեմատությամբ	Թիքային համազարկը տանկերով	Աճման տոկոսը 1918 թ. համեմատությամբ	Գնդակների քանակը մեկ ընդհանրությամբ	Աճման տոկոսը 1918 թ. համեմատությամբ
<b>Անգլիա</b>						
1918	1.758	100	148,8	100	605.400	100
1934	1.072	61	608	408	1.651.200	272,7
1938	2.238	127,3	1.476	990,6	5.600.000	925
<b>Գերմանիա</b>						
1918	2.730	100	134	100	984.800	100
1934	620	22,7	350	261	954.000	97
1938	4.020	147	2.995	2.235	10.400.000	1.054
<b>Ֆրանսիա</b>						
1918	3.321	100	146,3	100	1.439.700	100
1934	1.970	59,3	385	264	2.595.000	180
1938	4.000	120	1.680	1.150	9.160.000	636
<b>Իտալիա</b>						
1918	812	100	—	—	—	—
1934	931	114,5	489	100	1.352.000	100
1938	2.161	416	1.534	314	5.248.000	388
<b>Յապոնիա</b>						
1918	250	100	—	—	—	—
1934	2.050	820	480	100	2.820.000	100
1938	3.005	1.200	793	160	6.400.000	227
<b>Աեհատան</b>						
1918	—	—	—	—	—	—
1934	634	100	23	100	783.600	100
1938	1.101	175	61	265	2.376.000	303

Այսպիսի պատկեր ունեյին կապիտալիստական ամենագլխավոր յերկրների ոդային ղինված ուժերը 1938 թվականին, սակայն, հասկանալի յե, նրանք այլ պատկեր ունեն այժմ, 1939 թ. մարտին:

Ավիացիոն շինարարությունն ուժեղ թափով շարունակում են կապիտալիստական բոլոր յերկրները: Ավիացիան՝ զորքերի այդ յերիտասարդ տեսակը՝ իմպերիալիստական բոլոր բանակները համարում են համադարման ուղմական բոլոր դժվարությունների դեմ: Իմպերիալիստները իրենց հույսը դրել են ավիացիայի վրա, նրա միջոցով բուրժուական-իմպերիալիստական և Փաշիստական կառավարող շրջանները հույս ունեն հաղթանակ ձեռք բերել առաջիկա պատերազմում:

Մեր ավիացիայի մասին կիսոսեմ ստորև:

Ընկերներ, միայն այս սակավաթիվ տվյալները բավական են, վորպեսզի տեսնենք իմպերիալիստական, մանավանդ Փաշիստական պետությունների սպառազինության հսկայական աճումը, վորպեսզի տեսնենք, թե ինչպիսի հսկայական միջոցներ են ծախսվում նոր, յերկրորդ ընդհանուր իմպերիալիստական սպանդի համար:

Կապիտալիզմի սպառազինությունների վոչնչով չզըսպվող այդ կատաղի թափի և ամենախնձաված ու խոր այն հակասությունների պատճառով, վորոնց մասին զեկուցեց ընկեր Ստալինը, միջադդային իրադրությունը ներկայումս այնպես և դասավորվել, վոր նոր ընդհանուր իմպերիալիստական պատերազմն անխուսափելի յե դարձել:

Աշխարհի նոր վերաբաժանման համար յերկրորդ իմպերիալիստական պատերազմն արդեն բոցկլտում և: Ճաշիստական ադրեստորները վոչ մի խոչընդոտի չհանդիպելով իրենց ճանապարհին, դեռ ու դեն են նետվում առաջին թեթև հաջողությունների մոլուցքից, նոր զոհեր փնտռելով: Դժվար և նախատեսել, թե հետագայում ինչպես կզարգանա այդ յերկրորդ իմպերիալիստական պատերազմը, թե յերբ և ինչպիսի յերկրներ և քաշելու նա իր արյունալի հոսանքի մեջ:

Մեզ համար անվիճելի յե մի բան, — այդ բոլորում է մի-  
ջազգային ներկա դրության այն ամբողջ վերլուծումից,  
վոր ավելց ընկեր Ստալինը, — այն է՝ մենք միշտ և անպատ-  
ճառ պետք է ունենանք հզոր, անխորտակելի Բանվորա-  
Գյուղացիական Կարմիր Բանակ և նույնպիսի հզոր, հաղ-  
թական Ռազմա-Մովային Կարմիր Նավատորմ:

Մենք այժմ, ավելի քան յերբեկեցե, դիտենք, վոր Կար-  
միր Բանակի և Ռազմա-Մովային Նավատորմի մշտական,  
խսկական մարտական պատրաստ վիճակում լինելը միայն  
կարող է հուսալի յերաշխիք ծառայել Խորհրդային պետու-  
թյան դեմ ուղղված ամեն տեսակ ռազմական ալանայու-  
րանների նկատմամբ, միմիայն այդ ճանապարհով, Պետու-  
թյան ռազմական ուժն է՛լ ավելի ամրապնդելու և կատարե-  
լագործելու ճանապարհով կարելի յե անվտանգ դարձնել  
իրեն՝ մեր յերկրի հաշվին հեշտությամբ շահվելու Փաշխա-  
տական կեղտոտ փորձերից, Խորհրդային պետության տե-  
րիտորիալ ամբողջականութունը ռազմական հարձակումնե-  
րի միջոցով խախտելու փորձերից:

### ՄԵՐ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Անցած հինգ տարում Կարմիր Բանակը և Ռազմա-Մո-  
վային Նավատորմը նշանակելի, իսկ վորոշ մասում, յես  
կասեյի՝ արմատական փոփոխություններ կրեցին իրենց  
կայմակերպման, սպառազինության, տեխնիկական հաղեց-  
վածության և մարտական պատրաստության դործում:

Յես կանդ կառնեմ ամենազլխավորի վրա.

1) Ինչպես հայտնի յե, Կարմիր Բանակի հրաձգային  
մասերն իրենց մեծամասնությամբ, և դորքի մյուս տեսակ-  
ներն աննշան չափով, առաջ կառուցվում եյին իրան սկզբ-  
բունքով, այսպես կոչված տերիտորիալ և կազրային սիս-  
տեմներով:

Տերիտորիալ սիստեմը, մորիլիզացիայի դեպքում, կան-  
խորոշում եր մեր հրաձգային ղեկիղիաների ընդարձակումը  
թվով փոքր և, հետևաբար, թույլ կազրերը հիմք ունենա-  
լով: Այդ նշանակում եր, վոր հրաձգային և միջանի այլ

զորային միավորումների մեծ մասը մորիլիզացիայից հետո  
առաջին շրջանում թույլ կազմակերպված կլինեյին և այդ  
զորքերի մարտունակութունը հարաբերական կլիներ:

Տերիտորիալ սիստեմը հանդուրժելի յեր մինչև այն  
ժամանակ, քանի դեռ կապիտալիստական յերկրների բա-  
նակները համեմատաբար փոքր եյին և պատերազմի դեպ-  
քում նույնպես ընդարձակվում եյին՝ հիմք ունենալով թույլ  
կազրերը:

Տերիտորիալ սիստեմը, վորպես մեր դորքի հիմքը, հա-  
կատության մեջ մտավ պետության պաշտպանության պա-  
հանջների նկատմամբ, հենց վոր իմպերիալիստական ամե-  
նագլխավոր յերկրների բանակներն սկսեցին մեծանալ և  
մարտական վիճակի մեջ դրվել արդեն խաղաղ ժամանակ:  
Մենք իրավունք չունեյինք կազմակերպական հին դիրքե-  
րում մնալու, վորովհետե դրանով իսկ մենք վոչ ձեռնտու  
դրության մեջ կղնեյինք մեզ՝ մեր հավանական հակառա-  
կորդների նկատմամբ: Հարկավոր եր արմատական ուե-  
ֆորմ՝ բանակը հեռմորիլիզացիոն վիճակի նոր պայմանե-  
րին, մեր Կարմիր Բանակի տակտիկական-ստրատեգիկ խըն-  
դիրներին և Պետության պաշտպանության պահանջներին հա-  
մապատասխան դարձնելու համար: Մենք չեյինք կարող,  
իրավունք չունեյինք թույլ տալու, վոր մեր բանակը պա-  
կաս վարժված լիներ և ավելի թույլ, քան բուրժուական  
յերկրների բանակները:

Բացի դրանից, տերիտորիալ սիստեմն արդեն ստալի-  
նյան առաջին հնդամյակի իրականացման շրջանում չեր հա-  
մապատասխանում բանակը մարտական տեխնիկայով սպա-  
ռազինելու և ժամանակակից սպառազինությամբ հաղեցնե-  
լու դործի աճման աստիճանին:

Այդ ամենի պատճառով անհրաժեշտ համարվեց վերաց-  
նել մեր զորքերի տերիտորիալ կառուցման հիմքը և ամ-  
բողջովին անցնել ղինված ուժերի կազրային կառուցման  
սկզբունքին: Ներկայումս մեր ամբողջ բանակը կառուցված  
է միատեսակ և առայժմ միակ ճիշտ կազրային սկզբուն-  
քով:

2) Զորքերը կաղերային դրուժյան փոխադրելու հետ միաժամանակ արմատական վերակազմութեան յենթարկվեցին ռազմական կառավարչութեան տեղական ուղղանները, վորոնք կազմակերպորեն սերտ միահյուսվել էին կազմավորման տերիտորիալ մեթոդի հետ և չեյին կարողանում գլուխ բերել իրենց բարդացած ինդիւրները:

Ներկայումս զինվորական կոմիսարիատները ամբողջ սիստեմը վերակառուցված է նոր ձևով: Առաջվա կորպուսային և դիվիզիոն մարզային մորթիլիզացիոն ոկրուզների փոխարեն, վորոնք ղեկավարում էին շրջանային զինկոմատները, մի դործ, վոր վատ էյին կատարում, ստեղծվել են ինքնուրույն զինկոմատներ ավտոնոմ հանրապետութիւններում, յերկրամասերում ու մարզերում, ավտոնոմ մարզերում ու քաղաքներում, իսկ շրջանային զինվորական կոմիսարիատների ցանցն ընդարձակվել է 3½ անգամ: Այդ վերջին միջոցառումը զգալիորեն բարելավել է զինապարտների հաշվառման, զորակոչի սիստեմը և մորթիլիզացիայի պայմանները:

3) Զորքերի մարտական պատրաստութեան կառավարումն ու ղեկավարումը բարելավելու նպատակով այս ժամանակաշրջանում լրացուցիչ կերպով ստեղծվել են զինվորական յերկու ոկրուզներ ևս՝ Կալինինի և Որյոլի:

4) Վերակազմվել է Հեռավոր Արևելքի զորքերի կառավարչութիւնը: Առաջ գոյութիւն ունեցող Հեռավոր Արևելյան Կարմրադրոշ ճակատի փոխարեն այժմ ստեղծված են բանակային առանձին յերկու կառավարչութիւններ: Այդ ձևոնարկումը խիստ բարելավեց մեր զորքերի կյանքի ու մարտական ուսման ղեկավարումը Պրիմորյեյում ու Պրիամուրյեյում:

5) Ստալինյան Սահմանադրութեան համապատասխան վերակազմվեցին աղբային զորամասերը:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը հանդիսանում է Սորհրդային պետութեան միասնական բանակը և կոմպլեկտավորվում է Սորհրդային Միութեան քաղաքացիներէջ՝ ընդհանուր ու հավասար հիմունքներով: Այդ պատճառով իրենց տերիտորիայի հետ մշտապես կապված առան-

ձին մանր աղբային զորամասերի գոյութիւնը հակասում էր Ստալինյան Սահմանադրութեան հիմունքներին և մեր բանակի եքստերիտորիալ կազմավորման սկզբունքներին: Աղբային զորամասերը ձուլվեցին Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կազմի մեջ ընդհանուր հիմունքներով:

6) Ինչպես հայտնի յե, մեր սահմաններն ամենախոցելի տեղերում գոտևորված են ամրացված շրջանների շերտով: Այս ժամանակի ընթացքում միջոցներ են ձեռք առնվել ուժեղացնելու առաջներում կառուցված ամրութիւնները և կառուցելու մի շարք լրացուցիչ ամրացված շրջաններ, վորոնք արմատապես բարելավում են սահմանների պաշտպանութեան ամրող սիստեմը: Զգալիորեն աճել են ամրացված շրջանների հատուկ զորքերը:

7) Բանակի թվի ու ռազմական տեխնիկայի աճման և մարտիկների անընդհատ ավելացող կուլտուրական ու քաղաքական պահանջների կապակցութեամբ անհրաժեշտ համարվեց ստեղծել կոմիսարների ինստիտուտ:

8) Իմ բոլոր ասածներին անհրաժեշտ է ավելացնել, վոր մի տարի առաջ կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն և Կառավարութիւնը ստեղծեցին 11 հոգուց բաղկացած Ռազմական Գլխավոր Սորհուրդ, վորի կազմի մեջ մտավ նաև մեր Ստալինը: (Բուռն ծափահարութիւններ):

Ռազմական Գլխավոր Սորհուրդի ինդիւրն է զննութեան առնել և լուծել Կարմիր Բանակի շինարարութեան բոլոր հիմնական և ամենադժարութեամբ հարցերը:

Ստեղծված են զինվորական ոկրուզների Ռազմական Սորհուրդներ:

9) Յեվ, վերջապես, այս ժամանակաշրջանում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կազմից առանձնացվել է վորպես հատուկ ժողովրդական Կոմիտարիատ—Ռազմա-Պովային Նավատորմը, վորի մասին դուք բոլորդ ել գիտեք:

Անցնում եմ անցած ժամանակամիջոցում բուն շարային զորքերի մեջ տեղի ունեցած փոփոխութիւնների հարցին:

Ի՞նչ փոփոխութիւններ են տեղի ունեցել այս ժամանա-

կամ ընդհանուր կարմիր Բանակի քանակական կազմի մեջ: Յեթե XVII կուսակցական համադրումների շրջանի կարմիր Բանակն ընդունենք 100%, ապա 1939 թվին, XVIII կուսակցական համադրումների օրերին, նա կկազմի 203% (բուռն ծափահարություններ, ովացիաներ, «ուռա» բացականչություններ), այսինքն՝ քանակապես ավելացել է 103%-ով, կամ Բանակն իր ամբողջութամբ մեծացել է յերկու անգամից մի քիչ ավելի:

Թվի այդ ավելացումը համաչափ չէ բաշխվել ըստ գործերի տեսակներին, այլ նայած դրանցից մեկի կամ մյուսի կարևորության աստիճանին: Բանակի համեմատաբար շոշափելի այդ մեծացումն առաջ բերեց նաև ուրիշ շատ լուրջ փոփոխություններ:

Ներկայումս մենք տաս անգամ ավելի կադրային հրաձիգ զինվորականներ ունենք, քան կար առաջ, յերբ դոյություն ուներ տերիտորիալ սխտեմ և բանակն ավելի փոքր կազմ ուներ:

Որտա փոխվել է խաղաղ ու պատերազմի ժամանակվա հրաձիգ զինվորականների հաստիքային թիվը: Յեթե առաջ պատերազմական ժամանակի մեր հրաձիգ զինվորական բազմ կացած էր 13.000 հոգուց, ապա ներկայումս հրաձիգ զինվորական ունի 18.000 հոգի: Թվի ավելացումը տեղի ունեցավ զլխավորապես իհաչիվ հրետանային սպառազինման ուժեղացման՝ սկսած այսպես կոչված մերձավոր մարտի հրետանուց և վերջացրած զինվորի զրետանիով, իհաչիվ զնդացրային կրակի ուժեղացման, ինչպես և իհաչիվ վաշտերի հարվածային ուժի ավելացման, այսինքն՝ դասակի հրաձիգների թվի ավելացման:

Հրաձիգ զինվորականները մտնում են հրաձիգ կորպուսների կազմի մեջ: Հրաձիգ կորպուսը բաղկացած է յերեք և առանձին դեպքերում՝ յերկու հրաձիգ զինվորականներից:

Այսպիսով, կարմիր Բանակի տիպարային հրաձիգ կորպուսը ներկայացնում է բավականին ազդու մարտական միավոր. նա ունի մոտ 60.000 մարտիկ և համապատասխան հրետանային, տանկային ու այլ սպառազինություն՝ սպա-

սարկման բազմապիսի միջոցներով և ավտոտրանսպորտ:

Մի քանի կապիտալիստական բանակների ժամանակակից հրաձիգ կորպուսների կրակի զորության մասին դադարի տարու և մեր հրաձիգ կորպուսի հետ համեմատելու համար բերում եմ հետևյալ հաշվարկումները, վոր կազմել են մեր մասնադետներն իմ առաջադրանքով:

Համեմատության համար վերցնում եմ Գերմանիայի և Ֆրանսիայի կորպուսները, վորպես կադմակերպական կառուցվածքով մեր հրաձիգ կորպուսի տիպին ամենից ավելի մոտեցող կորպուսներ:

Փրանսիայի հրաձիգ կորպուսի (3 զինվորային կազմով) ամբողջ հրետանու մի համադարկը հավասար է 6373 կիլոգրամի. իսկ նույն կազմով դերմանական հրաձիգ կորպուսինը՝ 6078 կիլոգրամի: Կարմիր Բանակի հրաձիգ կորպուսի հրետանու համադարկը հավասար է 7136 կիլոգրամի (ծափահարություններ):

Այսպիսով, մեր հրաձիգ կորպուսի հրետանային կրակի համադարկը դերմանական և Ֆրանսական կորպուսների համադարկից ավելի յե:

Յեվ այնուհետև: Վերոհիշյալ հրաձիգ կորպուսների մի րոպեյում բաց թողած արկերի կշիռը. Ֆրանսական կորպուսը մեկ րոպեյում կարող է բաց թողնել 51.462 կիլոգրամ, դերմանականը՝ 48.769 կիլոգրամ: Մեր հրաձիգ կորպուսը մեկ րոպեյում կարող է տալ 66.605 կիլոգրամ մետաղ (ծափահարություններ):

Բացի հրետանուց, կորպուսն ունի նաև հրացանային, դնդացրային, ականաձիգ, ումբաձիգ և այլ զենքեր, վորպիսի հանդամանքը բարձրացնում է կորպուսի բոլոր զենքերի մեկ րոպեյում բաց թողած մետաղի ընդհանուր կշիռը:

Յեթե մեկ րոպեյում արձակված հրետանային կրակին ավելացնենք արկերի, ականների, հրացանային ումբերի ու դնդակների կշիռը, ապա կստանանք մեկ րոպեյի համադարկի ընդհանուր կշիռը՝

Ֆրանսական կորպուսում	60-981 կգր.:
գերմանական կորպուսում	59-509 կգր.:
և մեր հրաձիգ կորպուսում	78-932 կգր.:

(ծափահարություններ) :

Բերված տվյալները ցույց են տալիս, վոր մեր հրաձիգ կորպուսը, հետևաբար նաև ամբողջ Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը, հետ չի մնում, այլ վորոշ չափով առաջ է անցնում իր կրակային գորությամբ կապիտալիստական, Ֆաշիստական յերկրների բանակներից (ծափահարություններ) :

Յես ղիտակցաբար տվյալներ չեմ բերում,—թեև յես սենեմ դրանք,—յապոնական, լեհական և այլ բանակներից, վորովհետև այդ բանակների, նրանց ղիվիզիանների, կորպուսների կազմակերպումն ու սպառազինումը բնավ չի կարելի համեմատել Գերմանիայի և Ֆրանսիայի բանակների հետ :

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Կառավարությունը, ընկեր Ստալինը, ամբողջ կուսակցությունը, ամբողջ Ժողովուրդը պահանջում են, վոր մենք հետ չմնանք մեր հարևաններից մեր սպառազինությունների ու մեր պետության սպառազինական գորության ասպարեզում, և մենք, ինչպես տեսնում եք, հետ չենք մնում, իրավունք չունենք հետ մնալու (ծափահարություններ) :

Կարմիր հեծելազորը, ինչպես և զորքերի այլ տեսակները, նմանապես աճել է իր քանակով : Հեծելազորի նկատմամբ մենք ունենք 52% աճում : Հեծելազորի տեխնիկական հագեցումը աճել է հետևյալ կերպ .

ձեռքի զնդացիքների նկատմամբ	30%-ով :
հաստոցային զնդացիքների նկատմամբ	21%-ով :
զենիթային-կոմպլեքսայինների նկատմամբ	31%-ով :
հրետանու նկատմամբ	43%-ով :

Բացի դրանից, ստեղծվել է հեծելազորի զենիթային հատուկ հրետանի, վորն հաստատապես պաշտպանում է նրան ուղից, հեծելազորային ղիվիզիանների տանկային զրն-

գերը ուժեղացված են 30%-ով և նրանց կցված են ավտոգրահային հատուկ զորամասեր :

Սա հիմնականն է, չխոսելով արդեն յերկրորդական շատ քաների մասին, վոր արված է և վորը նույնպես մեծ նշանակություն ունի մեր կարմիր հեծելազորի մարտական ու հարվածային ուժը բարձրացնելու համար :

Ավտո-գրահա-տանկային գորգերը հաշվետու շրջանում աճեցին հետևյալ կերպ . մարդկային կազմի ընդհանուր թիվն աճել է 152,5%-ով : Տանկային զորամասերը և տանկային զորքերի միավորումները լիովին վերակազմված են նրանց տակտիկական-մարտական կոչման համապատասխան : Տանկային օրդանիզմների ավելացումն արտահայտվում է 180%-ով : Տանկային պարկը քանակապես ավելացել է 191%-ով : Զրահա-մեքենաների քանակն աճել է 7½ անգամ :

Միաժամանակ նորոգվել է տանկային զորքերի նյութական մասը : Մտցվել են տանկերի նոր տիպեր և կատարելազործվել հները՝ նրանց զրահային պաշտպանությունն ու հատուկ սարքավորումն ուժեղացնելու տեսակետից :

Նիստ փոխվել է տանկային զորքերի սպառազինությունը, մանավանդ նրանց հրետանային սպառազինությունը :

Վորպեսդի դադափար տանք այստրվա տանկային զորքերի կրակի գորեղության մասին՝ համեմատած այն բանի հետ, ինչ վոր եյին նրանք 5 տարի առաջ, բերում եմ հետևյալ տվյալները .

Յեթե վերցնենք տանկերի և ավտո-գրահա-մեքենաների զենքի բոլոր տեսակների 1934 թվականի համազարկը վորպես 100, ապա 1939 թվականին մի համազարկը հավասար կլինի 393%-ի կամ մեր տանկային զորքերի կրակային համազարկի կարողությունն աճել է համարյա 4 անգամ՝ համեմատած 1934 թվականի հետ :

Յեկ այնուհետև : Յեթե 1934 թվականին մեր ամբողջ տանկային պարկի մի բաժնի կրակային գորությունը հավասար եր 100%-ի, ապա 1939 թվականին այդ գորու-

Թյունն աճել է մինչև 334% կամ ավելացել է համարյա 31½ անգամ :

Հրետանին: Մեր զորքերի հրետանային սպառազինութ-  
թյան հարցերին առանձնապես լուրջ ուշադրություն է  
նվիրվել: Աշխատանքի այդ բնագավառում ևս արդյունքնե-  
րը վատ չեն:

Թեթև հրետանին առանց հակատանկային և մերձավոր  
զործոդություն հրետանու այս ժամանակաշրջանում աճել է  
34%-ով:

Միջակ հրետանին ավելացել է 26%-ով:

Ծանր հրետանին աճել է 85%-ով:

Ձեռնիթային հրետանին աճել է 169%-ով:

Հակատանկային և տանկային հրետանին, վորը բա-  
վականաչափ զարգացած չեր, ներկայումս աճել է ավելի  
չատ, քան հրետանու մյուս տեսակները: Կարճ կասեմ, վոր  
հակատանկային և տանկային հրետանու նկատմամբ Կար-  
միր Բանակը զինված է լիովին և այն ել առաջնակարգ  
զենքով:

Առաջ մենք չունեյինք կամ ավելի ճիշտ՝ համարյա  
չունեյինք այսպես կոչված մերձավոր մարտի հրետանի:  
Ներկայումս հրետանու այդ չափազանց կարևոր տեսակը  
(ականաձիղ և ուբաձիղ) մենք ստեղծել ենք և սպառազին-  
ություն հրետանից ունենք հարկավոր քանակությունը ու  
լավ վորակով:

Հրետանային սպառազինության քանակական աճման  
հետ միասին բարձրացել են սպառազինության մեջ ինչպես  
նոր մտցված, այնպես էլ հին, բայց կատարելապես ժամա-  
նակակից դարձված հրետանային սխտեմներին նաև վորա-  
կական ցուցանիչները:

Բացի դրանից, արմատապես փոխվել է թնդանոթային  
և հորիցային հրետանու հարաբերությունը հրետանային  
զորամասերում: Բավական է մատնանշել, վոր հորիզոն-  
ային աճումը ներկայումս արտահայտվում է 80%-ով, իսկ  
այդ նշանակում է, վոր մեր հրետանին ավելի եֆեկտիվ է

դարձել, վորովհետև նրա շարժիչ հատկություններն զգա-  
լիորեն բարձրացել են:

Ձգալի չափով ավելացել է մեր հրետանու բոլոր տեսակ-  
ների հեռաձգությունը: Այսպես, որինակ, ծանր հրետա-  
նու հեռաձգությունը 50%-ից հասել է 75%-ի հրետանու  
զանազան տեսակների համար:

Ավելացել է հրետանային համարյա բոլոր սխտեմնե-  
րի, մանավանդ հակատանկային և տանկային թնդանոթ-  
ների արագաձգությունը, վորտեղ մենք ունենք արագա-  
ձգության ավելացում յերկու անգամից ավելի:

Տեղի յե ունեցել արկերի կշիռ ավելացում և նրանց  
մարտական հատկությունների բարելավում:

Կարմիր Բանակի հակաֆիմիական գորքերը, վորոնք  
կոչված են պաշտպանելու բանակը թշնամու քիմիական  
հարձակումից և քիմիական միջոցներով թշնամու տված  
հարվածին պատասխանելու նույն քիմիական միջոցների  
հարվածով, նույնպես փոխվել են իրենց կազմակերպու-  
թյամբ և քանակապես ավելացել են յերկու անգամ:

Ներկայումս հակաքիմիական պաշտպանություն միջոց-  
ները թե՛ վորակապես և թե՛ քանակապես բոլորովին նման  
չեն այն միջոցներին, վոր մենք ունեյինք 5 տարի առաջ:

Ամենից առաջ բարելավվել են մարտիկի մաշկի բաց  
մասն ու շնչառությունը պաշտպանելու միջոցները, ստեղծ-  
վել են բավական քանակությամբ պաշտպանական միջոց-  
ներ, վորոնք պահպանում են մարտիկին ողային քիմիական  
հնարավոր հարձակումներից, ինչպես և ստացվել են պաշտ-  
պանական միջոցներ ձին և գուլքը քիմիական վարակու-  
մից պահպանելու համար:

Վորակապես բարելավվել և քանակապես զգալիորեն  
ավելացվել են վայրի մեխանիկական ու անխնդրական  
սպառազանցման միջոցները: Մեծ աշխատանք է կատարվել  
այդ դժով հատուկ մեքենաներ ստեղծելու բնագավառում:

Ընդամենը միայն յերկու խոսք կապի գորքերի վիճակի,  
զորքերի այդ շատ կարևոր տեսակի մասին, վորոնց վրա  
յե հենվում խաղաղ և մանավանդ պատերազմի ժամանակ

գործերը կառավարելու և զեկավարելու ամբողջ աշխատանքը:

Կապի գործերն աճել են 37%-ով: Աճումը տեղի յե ունեցել է հաշիվ կապի գործերի զբալի հազեցման ժամանակակից տեխնիկայով:

Ոգտագործվում են գործողութայն ընդարձակված չառավիղ ունեցող և զբող ապարատներով սարքավորված ուղիովայաններ:

Արագ գործող հեռագրային ապարատներն ավելացել են 200%-ով: Մացված են հեռավոր գործողութայն հեռախոսային ապարատներ:

Ուժեղացել են կապի գործերի շարժունակութունը:

Կապի գործերը համարյա ամբողջովին մոտորացված են:

Այդ բոլորը և ուրիշ շատ բաներ պահանջեցին ընդարձակել գործերի այդ տեսակի թիվը և բարելավել նրանց վորակը:

Առանձին տեղ են զբալում մեր յերկրի կապաղային ակտիվ պաշտպանութայն հարցը: Այդ հարցին զգալի ուշադրութուն նվիրվեց անցած շրջանում, սակայն պետք է խոստովանել, վոր մենք դեռ չենք արել այն ամենը, ինչ հարկավոր են: Բայց արդեն տվյալ մոմենտին մենք ունենք մեր յերկրի հիմնական կենտրոնների հակաողային պաշտպանութայն խիստ բարելավում:

Բավական են մատնանչել միայն զենիթային հրետանու քվակամ անումը, վորպեսզի հասկանանք, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարվել արդեն: Զենիթային հրետանին աճել են 288,3%-ով:

Բարելավվել են նաև զենիթային հրետանու վորակը, այսպես, որինակ, զենիթային հրետանու առատաղը ավելացել են 60%-ով (ծափահարություններ):

Պետական կարևորաղոյն կենտրոնների ու քաղաքների հակաողային պաշտպանությունը մեղ մոտ կառուցվում են, ինչպես հայանի յե, զենիթային հրետանու և կործանիչ ավիացիայի փոխաղարձ գործողությունների հիման վրա:

Այդ փոխաղարձ գործողությունների կազմակերպումը բարելավելու հետ միաժամանակ տեղի յե ունեցել կործանիչ ավիացիայի ավելացում, վորն աճել են 142,3%-ով:

Յես չեմ շոչափում այսպես կոչված պասսիվ (բառ եմ ասել ե') հակաողային պաշտպանութայն կամ ավիել լայլ և ճիշտ կլինի ասել՝ տեղական, քաղաքացիական հակաողային պաշտպանութայն հարցերը, թեև այս հարցը արժանի յե, վոր նրա մասին ասվի այն ամենը, ինչ պետք է ասել: Կասմանափակվեմ միայն նրանով, վոր այս բնագավառում գործը, զժբախտաբար, մի ջիչ վատ են, այն ել վոչ այնքան մեր (զինվորականների), վորքան տեղական աշխատողների մեղը: Այս գործով պետք է զբաղվել ընդհուպ և առանց ձգձգումների:

Յես բոլորովին չեմ շոչափում ներբանակային գորային հակաողային պաշտպանութայն հարցերը. նա պարզանում են նորմալ կերպով, բանակի աճմանը համապատասխան:

Ձեր ուշադրությունն այլևս չհոգնեցնելու համար բաց եմ թողնում ոժանդակ գործերին, ինչպես, որինակ, յերկաթուղային, ինժեներային, արոժեկտորային, ավտո-արանտպորտային և այլ գործերին վերաբերող հարցերից շատերը, գործեր, վորոնք, ինչպես և ամբողջ բանակը, այս ժամանակվա ընթացքում խիստ փոխել են իրենց զեմքը թե՛ քանակապես և թե՛, մանավանդ, վորակապես:

Ռազմաողային ուժերը, համեմատած 1934 թվականի հետ, իրենց անձնական կազմով աճել են 138%-ով, այսինքն՝ ավելացել են համարյա յերկու և կես անգամ (ծափահարություններ):

Ինքնաթիռային ամբողջ պարկն աճեց 130%-ով, այսինքն՝ ընդարձակվեց յերկու անգամից զգալիորեն ավելի:

Իսկ յեթե ողային նավատորմի աճած կարողությունն արտահայտենք ավիամոտորների ձիու ուժով՝ համեմատած 1934 թվականի հետ, ապա կատանանք 7·900·000 ձիու ուժի ավելացում կամ 213%-ով աճում՝ համեմատած այն բանի հետ, ինչ կար հինգ տարի առաջ (ծափահարություններ):

Ողային նավատորմի քանակական աճման հետ միասին, փոխվել է նաև նրա վորակական ելուժյունը:

Ահա ասածներս վկայող համառոտ տվյալներ.

	Ավելացում		
	Արագության	Բարձրության	Հեռավորության
Կործանիչներ	56,5%	21,5%	—
Ռմբակոծիչներ (մերձավոր գործողության)	88%	83%	50%
Ռմբակոծիչներ (հեռավոր գործողության)	70%	77%	61%
Հնամուտ զինքներ և գրոհողներ	67%	23%	45%

Այս ժամանակվա ընթացքում փոխվել է, վորը շատ կարևոր է, նաև ավիացիայի տարբեր տեսակների հարաբերակցությունը ուղղաօդային նավատորմի ներսում:

Ծանր-ոմբակոծիչ ավիացիան 10,6%-ից հասել է 20,6%-ի՝ աճում յերկու անգամ:

Թեթև-ոմբակոծիչ, գրոհային և հետախույզ ավիացիան 50,2%-ից նվազել-հասել է մինչև 26%-ի՝ նվազում յերկու անգամ:

Կործանիչ ավիացիան 12,3%-ից հասել է մինչև 30%-ի՝ աճում յերկու և կես անգամ:

Այսպիսով, ավիացիայի տեսակների հարաբերակցությունը փոխվել է հողուտ ոմբակոծիչների և կործանիչների ավելի քան յերկու անգամ:

Այս նշանակում է, վոր մեր ավիացիան ընդհանրապես ավելի յե հզորացել և նրա հարվածող ուժը համապատասխանորեն բարձրացել է:

Յեթե 1934 թվականին մեր ամբողջ ողային նավատորմը մի թափքի ժամանակ կարող եր բարձրացնել 2.000 տոնն ավիո-ոտմբ, ապա ներկայումս նա արդեն բարձրացնում է 208%-ով ավելի. ուրիշ խոսքով՝ ոմբային միաժամանակյա համադարին տվելացել է 3 անգամ: Հարվածող

մետաղի այդ մասսան, վորն ընդունակ է հսկայական տարածություններ անցնելու, խորհրդային վոչ վատ զսպող շապիկ կարող է լինել ցնորամիտ գաղափարներով համակված ազրեստորների համար, յեթե նրանք, ինչպես թափով բռնված, վրա քչեն խորհուրդների յերկրի վրա (բուռն ծափահարություններ):

Դրա հետ միաժամանակ ավելացել է մեր ռազմա-ողային նավատորմի զնդացրային համադարկի զորությունը: Յեթե 1934 թվականին մեր բոլոր ավիացիոն զնդացիւրները մի բոպելում կարող եյին տալ 100% կրակոց, ապա 1939 թվականին նրանք կարող են տալ 300%-ով ավելի:

Յես հասկանում եմ ընկերների բնական ցանկությունը՝ իմանալու, թե ինչպիսի ինքնաթիւններ ունենք մենք գոնե արագության, առաստաղի, հեռագնացության տեսակետից, ինչպիսի՝ վոչ թե տոկոսային, այլ մարդկային հասկացողությանը մատչելի ցուցանիչներով: Ընդառաջելով այդ բնական ցանկությանը, յես զեկուցում եմ, վոր այժմ մեր ռազմական ողանավակայաններում հաղվագյուտ չե հանդիպել մի ժամում 500 կիլոմետրից շատ ավելի հեռու գնացող վոչ միայն կործանիչ, այլ և ոմբակոծիչ (բուռն ծափահարություններ: Բացականչություններ՝ «Ուռա՝»: «Կեցցե՛ր ընկեր Ստալինը»: «Կեցցե՛ր ընկեր Վորոշիլովը», «Կեցցե՛ր կարմիր ավիացիան»: «Ուռա՝»: Դաիլիքը հոտնկայս ովացիա յե սարժում ի պատիվ ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի), իսկ բարձրությամբ՝ 14—15 հազար մետրից ավելի (ծափահարություններ). իսկ ինչ վերաբերում է մեր ինքնաթիւնների հեռագնացությանը, ապա դրա մասին գործով լավագույն կերպով խոսեցին Սորհրդային Միության յերջանկահաջատակ Հերոս Վալերի Չկալովը և Սորհրդային Միության Հերոսներ՝ ընկերներ Գրոմովը, Բայգուկովը, Յոմաշևիլը, Բելյակովը, Դանիլինը, Կոկկինա-կին, հանդուցյալ Բրյանդինսկին և մեր հրաշալի կին-ողաչուներ, Սորհրդային Միության Հերոսուհիներ՝ ընկերներ Գրեգուրովան, Ոսիպենկոն և Ռասկովան (ծափահարություններ),

Դուք բոլորդ ել, իհարկե, գիտեք, վոր նրանք՝ այդ և ուրիշ շատ ու շատ հերոսներ, մեր ստալինյան բաղեները, մեր ավիացիայի ղեկ շատ հատկութունների մասին զորք-ծով կպատմեն մեր ժողովրդին և ամբողջ աշխարհին (յեթ-կարտև ծափահարություններ) :

Ընկերներ, յես վոչինչ չասացի մեր պանծալի Բանվոր-բա-Գյուղացիական Ռազմա-Մովային Նավատորմի մասին վոչ միայն այն պատճառով, վոր նա այժմ ներկայացնում է ինքնուրույն ուժ, վորն ինքնուրույն կերպով կառավարվում է ժողովրդական կոմիսարիատի կողմից, այլ և այն պատ-ճառով, վոր դուք Գերագույն Սորհրդի Սեսիայում ընկեր Մո-լոտովի յեւրոյթներին և այլ ազգուրներից գիտեք, վոր կու-սակցությունը, կառավարությունը վորոշել են կառուցել և արդեն հաջողությամբ կառուցում են հզոր Ռազմա-Մովա-յին ու ուլկիանոսային նավատորմ, ինչպես նաև այն պատ-ճառով, վոր Ռազմա-Մովային Նավատորմի մասին կասեն այլ ընկերներ :

Իմ յեւրոյթի այս հատվածն ավարտելու համար յես կրեթեմ միայն մեկ տեղեկանք, վորպեսզի ձեզ տվյալներ հաղորդեմ մեր բանակի մոտորիզացիայի ուժեղացման մա-սին :

1934 թվականից հետո ընկած ժամանակաշրջանում մոտո-րացման աճումը ամբողջ բանակում արտահայտվում է 260%-ով : Ստացվում է հետևյալ պատկերը . 1934 թվակա-նին ԲԳԿԲ յուրաքանչյուր կարմիր-բանակայինի միջին հաշ-վով ընկնում էր 7,74 ձիու ուժ, 1939 թվականին յուրաքան-չյուր կարմիր-բանակայինի ընկնում է 13 ձիու ուժ, վորը կազմում է 167% աճում (յեթկարտև ծափահարություն-ներ) : Դա՝ այն ժամանակ, յերբ ինքը բանակն աճել է ավե-լի քան յերկու անգամ :

## ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ընկերներ, յես ձեզ գեկուցեցի այն փոփոխությունների մասին, վոր կատարվել են մեր բանակի կազմակերպման,

սպառազինման ու տեխնիկական հաղեցման մեջ վերջին 5 տարվա ընթացքում : Մեր բանակը միանգամայն այլ է դար-ձել թե՛ քանակապես և թե՛, մանավանդ, վորակապես :

Յես վոչինչ չասացի մարդկանց մասին, մեր մարտիկ-ների, հրամանատարների, կոմիսարների, քաղաշխատողնե-րի, պետերի, ինժեներների, տեխնիկների, ղինվորական բժիշկների, տնտեսավարների մասին, մի խոսքով՝ մեր բա-նակի մարդու մասին, վորը վերջին հաշվով վորոշում է ամեն ինչ և սահմանում է Բանվոր-Գյուղացիական Կար-միր Բանակի իսկական մարտական ուժն ու հզորությունը :

Տեխնիկան առանց՝ մարդկանց՝ մեռած է : Տեխնիկան գիտեցողների, տեխնիկային տիրապետած մարդկանց ձեռ-քում վիթխարի ուժ է :

Կադրերն են վորոշում ամեն ինչ : Սա անվիճելի յե : Հենց այս պատճառով էլ, կուսակցության Կենտկոմը և կառավարությունն այնքան շատ ուշադրություն եյին հատ-կացնում և հատկացնում են սեփական, իսկական խորհրդ-դային ուղղմական կադրերի, ղինվորական բարձր պարտքը ճանաչող և իրենց Հայրենիքին ու լենինի—Ստալինի մեծ գործին անսահմանորեն նվիրված մարդկանց կուսակիման հարցերին : Շատ ուշադրություն է հատկացվում մեր կադ-րերի աճմանն ու կատարելագործմանը քաղաքական և հատ-կապես ուղղմական տեսակետից : Մենք ունենք բավարար քանակությամբ և պահանջվող վորակի կադրեր : Նրանք անընդհատ աճում են բոլոր տեսակետներից մեր մեծ յերկ-րի ու բանակի աճման հետ միասին : Հենց այդպիսի մար-դիկ, այդպիսի կադրերն են մեր Կարմիր Բանակը դարձնում առաջնակարգ, անխորտակելի ըստ իր ուժի կազմակերպու-թյան, սպառազինման, մարտական պատրաստության և միակն ըստ վողու ուժի, ըստ քաղաքական ու բարոյական հզորության :

Կարմիր Բանակը դարձելի մարդկանցից մաքրելու ժա-մանակաշրջանում, մարդիկ, վորոնք դավաճանեցին իրենց Պետությանն ու մարտական գրոշին, Փաշխտական ու այլ իմպերիալիստական ազրեստորներն ամբողջ աշխարհով մեկ

կատարելի վճռուց բարձրացրին զինվորական կազմերի թուլացման, զրա պատճառով Կարմիր Բանակի մարտական հզորութեան նվազման և նման այլ բաների մասին:

Ընկեր Ստալինն ամենայն պարզութեամբ բացահայտեց այն արձագանքը, վորոնցից ծնունդ են առնում մեր թշնամիների նման վայնաստուները: Մենք, իբր թե, լավ չենք վարվում գործակալութունն ու լրտեսներին արմատախիլ անելով մեր բանակի շարքերից, վորտեղ այդ լեշն ուղարկված և սրբաբերկրյա հետախուզութունների կողմից: Պարոնայք Փաշխտական կառավարողներին ու նրանց գործակատարներին ավելի հաճելի կլինեք, յեթե ստոր զավաճաններ տուխաչելակիները, յեզորովները, որլովները և այլ ծախու սրիկաներ շարունակելին գործել մեր շարքերում, մասնելով մեր բանակը, յերկիրը: Դե՛, իհարկե, համաշխարհային սպանդի կազմակերպիչների համար շատ ավելի հարմար է իրենց սև գործով զբաղվելը, ուրիշ բանակներում ունենալով սեփական հուսալի գործակալութուն. չե՞ վոր գողի համար շատ ավելի հեշտ է մտնել ուրիշի տունը, յեթե տունը ներսից բաց անեն նրա գործակիցները:

Կարելի յեր ուշադրութուն չդարձնել Կարմիր Բանակի թուլութեան և այնի մասին Փաշխտական գրչակների այդ հերյուրանքներին, յեթե Փաշխտական ազրեստորները զբանից չանեյին չափազանց ունալ հետևութուններ:

Յեա նկատի ունեմ այն պարոններին, վորոնք սնվելով Կարմիր Բանակի թուլացման մասին իրենց բարեկամների հաղորդագրութուններով, իսկ վոր գլխավորն է, կորցնելով մեր բանակն ուղարկված իրենց գործակալութունը, անշրջահայաց կերպով շտապեցին «ողտվել», ինչպես նրանց թվաց, «հարմար առիթից» և շարժվել դեպի Սասան լիճը, վորպեսզի խորհրդային դռան տակից ներս սողան՝ ձեռները տաքացնելու ուրիշի բարիքի վրա, ուղղելու իրենց խճճված մութ գործերը:

Այդ ավազակային գործի արդյունքները հանրածանոթ են.

Առաջին Կարմրադրուշ քաղաքի Առանձին բանակն իր

մարտիկների, հրամանատարների և քաղաչխատողների զենքով հեշտ վաստակի սիրահարների թիկունքին դրեց իր պատասխանը՝ խորհրդային բանակի իսկական մարտունակութեան մասին, նրա հրամանատարական ու քաղաքական կազմերի վիճակի մասին:

Հուսանք, վոր այդ առարկայական դասը հաշվի կառնեն նրանք, ովքեր իրենց անկուշտ հայացքը տնկել են Սորհրդային պետութեան վրա, ում աչքին Կարմիր Բանակը թուլացած է յերևում, ով հակում ունի հալատալու այն առասպելին, թե խորհրդային հողը հեշտ մատչելի յե ավազակային ավանտյուրաների համար:

Յեթե այնուամենայնիվ Սասանի առարկայական դասերն անբավարար են, մեր Կարմիր Բանակը պատրաստ է ամեն մի բուպե կրկնելու դրանք ընդլայնված և ավելի համողիչ ծավալով, ամեն մեկի համար, ով կձգտի դրան (ծափահարութուններ):

Կարմիր Բանակն ավելի քան յերկու անգամ աճելու կապակցութեամբ, ինչպես նաև նրանում մարտական և ուժանդակ տեխնիկայի մեծ չափով ուժեղացման ու բարդացման հետևանքով համապատասխանորեն աճել, հետևապես նաև յերիտասարդացել է հրամանատարական-քաղաքական կազմը և ամբողջ մնացած պետկազմը:

Մեր կազմերի թվական աճումն անցած հինգ տարվա ընթացքում բնութագրվում է հետևյալ ամյայններով.

Հրաձիգ գործերի հրամանատարական պետկազմը, ներառյալ այդ գործերի նաև հրետանային մասերը, աճել է 118%-ով,

հեծելազորինը՝ 66%-ով,

